ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ և ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավի-ճակը ընդունվել է/ մերժվել է	Առաջարկի մերժման հիմնավորումը
1	**Վանաձոր համայնքի հասցեների տեղեկատվական համակարգի բարեկարգման ծրագիր**	Առաջարկվում է ծրագիր, որը կբարելավի Վանաձոր համայնքի հասցեական տեղեկատվական համակարգը: Ցուցանակներ վրա կտեղադրվի քյուառ կոդեր, որոնցով կարելի է իմանալ տեղադիրքը: Ծրագրի արժեքը չի գերազանցի 15,000,000 մլն. դրամը:	Ընդունվել է	
2	**Երկու խաղահրապարակի կառուցում Գուգարք գյուղում**	Առաջարկվում է Գուգարք գյուղում բազմաբնակարան շենքերի և նոր կառուցվող մանկապարտեզի մոտ, ինչպես նաև Կոտեջային և Էներգետիկների փողոցի մոտ խաղահրապարակի կառուցում՝ ֆոտովոլտային լուսավորությամբ և մարզական գույքով:	Ընդունվել է	

3	**Հեծանվային ուղիների կառուցում**	Վանաձորում հեծանվային երթևեկությունը խթանելու, հեծանվորդների ու հետիոտների համար անվտանգ և հարմար պայմաններ ստեղծելու նպատակով առաջարկվում է կառուցել հեծանվային ուղիներ:	Ընդունվել է	Հեծանվային ուղիների կառուցումը նախատեսվում է գծանշել Աբովյան փողոցից դեպի Զաքարյան փ. նաև Սայաթ-Նովայի այգին:
4	**Գուգարք բնակավայրի փողոցների լուսավորություն**	Առաջարկվում է Գուգարք գյուղում ավելացնել փողոցային լուսավորությունը՝ գյուղի ամբողջ տարածքով, որը կնպաստի բնակավայրի բարեկարգմանը և բնակիչների բարեկեցիկ կյանքին:	Մերժվել է	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ. բյուջեի միջոցներով:
5	**Skate Park-ի կառուցում Վանաձորի Սայաթ-Նովայի անվան քաղաքային զբոսայգում**	Առաջարկվում է Վանաձորում ակտիվ սպորտային ժամանցի տարածքների զարգացումը խթանելու համար կառուցել ժամանակակից ռետինապատ Skate Park Սայաթ-Նովայի անվան քաղաքային զբոսայգում: Skate Park-ը կլինի բազմաֆունկցիոնալ՝ նախատեսված սկեյթբորդինգի, BMX հեծանվային մարզումների, ռոլիկներով և սկուտերներով շարժվելու համար:	Ընդունվել է	
6	**Նոր՝ավելի անվտանգ ճանապարհ Բաղրամյան պողոտայի բարեկարգման ծրագիր**	Բաղրամյան պողոտայի ամբողջական ասֆալտապատում, ինչպես նաև շրջադարձի կետերի հստակ գծանշում՝ համապատասխան նշանների տեղադրմամբ: Բացի այդ, առաջարկվում է կառուցել այլընտրանքային ճանապարհի տարածքի վերին հատվածում:	Մերժվել է	Վերոնշյալ ճանապարհը հանդիսանում է միջպետական:

7	**Ճանապարհաշինություն Վանաձոր-Դարպաս միջհամայնքային ճանապարհի կապիտալ վերանորո-գում**	Առաջարկվում է Վանաձոր-Դարպաս միջհամայնքային ճանապարհի կապիտալ վերանորոգում,ճանապարհի լայնեցում և հենապատի կառուցում: Ծրագիրը կարժենա մոտ 70,000,000-75,000,000 / յոթանասունից յաթանասունհինգ միլիոն/ դրամ:	Մերժվել է	Վերոնշյալ ճանապարհի հիմնանորոգումը կընդգրկվի 2026թ. սուբվենցիոն ծրագրերում:
8	**<<Սպորտային - խաղահրապարակի կառուցում>> Շահումյանում**	Շահումյան բնակավայրի Սուրբ Հակոբ եկեղեցու և համայնքապետարանի միջանկյալ տարածքում գտնվող Ազատամարտիկների պուրակում առաջարկվում է <<Սպորտային-խաղահրապարակի կառուցում >>: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 6մլն ՀՀ դրամ:	Ընդունվել է	
9	**Ջրամբարի կառուցում Դարպասում**	Առաջարկվում է Դարպաս բնակավայրում ջրամբարի կառուցում գումարի չափը 30,000,000 /երեսուն միլիոն/: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 1991թ.-ի սեփականաշնորհած տնամերձին կից 6-րդ փողոցում:	Մերժվել է	Հանձնաժողովը որոշեց, որ անհրաժեշտ է խորքային ուսումնասիրություն տարբեր գերատեսչությունների մասնակցությամբ:
10	**Լուսավորություն Դարպաս**	Լուսավորություն գումարի չափը մոտ 24,000,000 / քսանչորս միլիոն/ դրամ: Սպասարկելու է ողջ Դարպաս բնակավայրը:	Մերժվել է	Ծրագիրը հնարավոր է իրականացնել բյուջետային միջոցներով:
11	**Լուսավորություն Դարպաս**	Լուսավորություն գումարի չափը մոտ 24,000,000 / քսանչորս միլիոն/ դրամ: Ցանկալի հասցեներն են՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, և 7-րդ փողոցները:	Մերժվել է	Կրկվում է 10-րդ ծրագրի հետ:

12	**Շահումյան բնակավայր <<Սպորտա-յին-խաղահրապարակի կառուցում >>**	Շահումյան բնակավայրի Սուրբ Հակոբ եկեղեցու և համայնքապետարանի միջանկյալ տարածքում գտնվող Ազատամարտիկների պուրակում առաջարկվում է <<Սպորտային-խաղահրապարակի կառուցում >>: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 6մլն ՀՀ դրամ:	Ընդունվել է	Կրկվում է 8-րդ ծրագրի հետ:
13	**Շահումյան բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման առաջարկ ծրագիր**	Վանաձոր խոշորացված համայնքի Շահումյան բնակավայրի մանկապարտեզի համար առաջարկ ծրագիր: <<Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում>>: Ծրագիրը կարժենա մոտ 45 մլն դրամ:	Մերժվել է	Ծրագիրը կընդգրկվի 2026թ. սուբվենցիոն ծրագրերում:
14	**Շահումյան բնակավայրում ֆուտբոլի դաշտի վերակառու-ցում**	Դպրոցամերձ համապատասխան տարածքում ֆուտբոլի դաշտի վերակառուցում: Ծրագիրը կարժենա մոտ 7 մլն դրամ:	Ընդունվել է	
15	**Շահույան բնակավայրում կառուցել մարզական կենտրոն**	Շահումյան համայնքի «Ավտոգործ» առարկայի համար նախատեսված քարե տնակները վերապրոֆիլավորել՝ դարձնելով համայնքի համար կարևոր մարզական կենտրոն՝ մարզասարքերով, լողավազանով: Ծրագիրը կարժենա մոտ 25 մլն դրամ:	Մերժվել է	Անհրաժեշտ է կատարել շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, ինչպես նաև նշված բյուջեով հնարավոր չէ իրականացնել:

16	**Բացօթյա հանրային թատրոն և կինոթատրոն Վանաձորում**	Այս նախաձեռնության նպատակն է ստեղծել բացօթյա հանրային թատրոն և կինոթատրոն Վանաձորում: Յուջեի նախնական գնահատական (մինչև 50 մլն դրամ): Ծրագրի իրականացման փուլեր Հետազոտություն և նախագծում (1 ամիս) Համայնքի հետ քննարկումների անցկացում Վայրը որոշում Ճարտարապետական նախագծի մշակում Կառուցման փուլ (2-3 ամիս) Բեմի, նստարանների և տեխնիկական համակարգի տեղադրում Միջոցառումների կազմակերպում (շարունակական փուլ) Ֆիլմերի ցուցադրություն Թատերական ներկայացումներ Հանդիպումներ և բանավեճեր:	Մերժվել է	Ծրագիրն իրենից ենթադրում է հետագա շահագործում և պահպանություն, ինչն էլ պահանջում է շարունակական ծախսեր:
17	**Կանաչ քաղաք իմ Վանաձոր**	Առաջարկվում է լայնամասշտաբ ծառատունկ իրականացնել քաղաքի տարբեր հատվածներում: Ծառատունկի ծրագիրը նախատեսվում է իրականացնել նոր, կայուն տեսակներով, որոնք կհամապատասխանեն Վանաձորի կլիմայական պայմաններին:	Մերժվել է	2025թ. բյուջեում հատկացված է համապատասխան միջոցներ ծրագիրն իրականացնելու համար և անհրաժեշտություն չկա այն իրականացնելու մասնակցային բյուջետավորման միջոցներով